

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺ. Տ. ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ
(1888—1969)

1969 թ. մարտի 24-ին Թալինի շրջանի Ակունք գյուղում վախճանվեց արժ. տ. Գրիգոր քհն. Գևորգյանը:

Հանգուցյալը ծնվել է 1888 թ. Թալինի շրջանի Գյոզլու (Ակունք) գյուղում, հողագործի ընտանիքում: Նա իր նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ապա 1922 թ. Երևանի ս. Սարգիս եկեղեցում գեր. տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի կողմից ձեռնադրվել է քահանա:

Արժ. տ. Գրիգոր քահանան պաշտոնավարել է Թալինի շրջկենտրոնի եկեղեցում մինչև 1949 թ., այնուհետև տեղափոխվում է Ստեփանավանի ս. Սարգիս եկեղեցին, ուր պաշտոնավարում է մինչև 1961 թ.:

Ապա տկարության պատճառով տեղափոխվում է իր հայրենի գյուղ, ուր վախճանվում է մարտի 24-ին:

Արժ. տ. Գրիգոր քահանան Գևորգ Զ. Կաթողիկոսից պարգևատրվել է ծաղկյա փիլոնով և քահանայական լանջախաչով:

Հանգիստ իր ոսկորներին:

ՀԱՆԳԻՍՏ
ԱՐԺ. Տ. ՀԱԿՈԲ ՔԱՀԱՆԱ ԽՈՒԽՈՒՅԱՆԻ
(1904—1969)

1969 թ. մարտի 18-ին Ռոստովում վախճանվեց արժ. տ. Հակոբ քահանա Խոխլոյանը:

Հանգուցյալը ծնվել է 1904 թ. Ռոստովի մարզի Զալթր գյուղում: Նա իր եկեղեցական ծառայությունը սկսել է 1919 թ. լինելով դպիր Զալթր գյուղի ս. Համբարձման եկեղեցում տ. Խաչատուր քահանա Տեր-Բաղդասարյանի մոտ: 1947 թ. ձեռանադրվել է քահանա և մինչև 1956 թ. պաշտոնավարել Թոփտի գյուղի ս. Փրկիչ եկեղեցում: 1956 թվականից մինչև 1969 թ. տեր հայրը պաշտոնավարել է Նոր Նախիջևանի ս. Հովհաննու Կարապետի եկեղեցում:

1966 թ. ապրիլի 28-ին Վեհափառ Հայրապետը Իր համար 580 կոնդակով արժ. տ. Հակոբ քհն. Խոխոյանին շնորհել է քահանայական լանջախաչ:

Հանգիստ իր ոսկորներին: